ԿՏԱԿՔ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵՊԱՇՏ ՏԻԿՆՈՋ ՀԵՂԻՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆԲՈՒՆԻԱԹԵԱՆՑ:

## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Անցեալ տարի բարեյիշատակ տիկին Հեղինէ Վարդանեան Բունիաթեանց՝ կին Մարտիրոսի Խաչատրեան, իւր մարմնոյ հարկից որոշելու րոպէյումը՝ մի ամենագովելի ու բարեյիշատակ գործ գործեց, մատուցանելով մարդկութեան մի սուրբ պարտականութիւնը. որ և իւր կենդանութեան միջոցում պատրաստեց երկնքումը մի երջանիկ կեանք, որ իւր ունեցած գոյքի մասին մի կանոնաւոր կտակ կազմեց. որի մէջ աւանդեալ էր յանուն սրբոյ Էջմիածնի 50 րուբ. սուրբ Երուսաղէմի ազգային ժառանգաւորաց Ուսումնարանին 50 րուբ, Երնջակու սուրբ Կարապետի Վանքին. նոյնպէս 50 ր. սուրբ Ստեփաննոսի Կարմիր Վանքին 30 ր. Իսկ 150 րուբ. առանձին ևս տեղւոյս սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ Ազգային Հոգևոր Դպրոցին՝ 'ի նպաստ ազգի քանի մի որբ մանուկների. և այս իւր մի հոգեշահ ու ազնիւ նպատակը առաջ տանելոյ համար կարգել էր կտակակատար իւր հայրը Աղա Վարդան Բունիաթեանցին, կնքելով քնքուշ հոգին 'ի ձեռն Աստուծոյ պահապան հրեշտակին. և յիշեալ Պարոն Բունիաթեանցը իւր մի այնպիսի ազնիւ գործ կատարող աղջկայ գովանի բարեգործութիւնքը հետզհետէ Վանօրէից կտակած դրամները իւրաքանչիւրին՝ լիովին հասցրած ընդունել է սուրբ Էջմիածնի Մայր Աթոռոյ մերոյ սրբոյ Սինոդիցը, նոյնպէս և Երուսաղէմայ Սրբազան Պատրիարքից օրհնութեան թուղթ առ իւրն մարդասիրութիւն և մաղթանք հոգւոյն այն ազնիւ ու երջանիկ տիկնոջը. Նաև ներկայ օրերումս նոյն Պարոնը և Ազգային Դպրոցի անունով աւանդած վերոյիշեալ դրամները հասոյց դպրոցի յարգելի Հոգաբարձուացը.

Ուստի պարտ անձին կ'համարվի ամենիս մի այնպիսի ազնիւ տիկնոջ մեծահոգութեամբ բարի գործ տեսնելը խնդագար յիշել մաղթանքներիս մէջ 'ի փրկութիւն հոգւոյ նորին. Նաև մեր շնորհակալիքը ընծայել Պարոն Բունիաթեանցին՝ միջոցաւ պատուական Արարատ ամսագրի, նոյն և մաղթել, որ մեր սիրելի Հայ մայրերը և քոյրերը ևս չ'զլանան մատուցանելու այդպիսի ազգային օգտի առաքինի մեծահոգութիւնը մանաւանդ Ուսումնարանների վերաբերւած յիշատակարաններում.

Ուրեմն Արարատայ խմբագրութենէ քաջայոյս եմ, որ քաղցրութեամբ կ'բարեհաճի այս մեր մի քանի բառերը մամուլի տակ մտցնել իւր Հայրենասէր Արարատի թերթերում.

Տէր Գ. Յարութիւնեանց

Ի 23 յուլիսի 1870 ամի:

Ի ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ:

## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Համաձայն կարգադրութեան Հոգաբարձական ժողովոյ Աստրախանայ Հայոց ծխական Հոգևոր Դպրոցաց՝ կայացելոյ 'ի 20 յունիսի տարւոյս՝ անցելոյ՝ սկիզբն արարեալ տարեկան հարցաքննութեան աշակերտաց 'ի 6-էն այսր յուլիսի և աւարտեաց 'ի 15ն նոյն ամսոյ՝ յիւրաքանչիւրում աւուր պարապելով հարցաքննութեամբ միոյ կամ երկու առարկայի ծխական Դպրոցաց և Երկրորդ Դասատան և Օրիորդաց Դպրոցի. և գտեալ յառաջադէմ աշակերտս յառաջին դասատանց թուով իբրև 17՝ վերածեաց յԵրկրորդ դասատուն. զորմէ Հոգաբարձութիւնս խոնարհաբար խնդրէ միջոցաւ Արարատ լրագրոյ հաղորդել 'ի տեղեկութիւն ամենից բարենախանձ Անդամոց ազգի Հայոց.

Հոգաբարձուք Մինաս Քահանայ Մխիթարեանց
Սարգիս Բարջալեանց
Սեդրակ Պօղոսեանց
Գրիգոր Սողոմոնեանց:

Ի 28 յուլիսի 1870 ամի
ՅԱՍՏՐԱԽԱՆ:

(Աղէքսանդրապօլէն ղրկուած նամակին անցեալ ամսագրին շարունակը:)

ԺԹ. դարի նշանաւոր յեղափոխութեան մէջ կ'յիշուի կրթութենի ծեծից հեռանալը և տղայոց քաղաքական իրաւունքների բարձրանալը.

Այժմ ո՞վ չէ զգում անցեալների կոպտութիւնը. բայց հասկանալը գործ չէ, հարկաւոր է հասկացածներս իրագործենք յարմար և հաշուագէտ կարգով։ Արդեօք ի՞նչպիսի հնար կարող է ցոյց տալ Պ. Հայկազեանը իւրեան անձնագիտակցութիւնը սովորեցնելու համար՝ եթէ յիշեալ ուսուցչին հեռացնենք. նա կարո՞ղ է իւր միտքը աշակերտների առաջ իրագործել. կ՚յուսամ, որ պատասխանելու է "ժամանակ չունիմ" . . . . որովհետև բաց ի անշնորհութիւնից, պարզն ասեմ, նա ո՛չ նիւթական և ո՛չ բարոյական կշիռ ունի հասարակութեան մէջ։ Խոստովանում եմ, որ նորան ոչ թէ մանուկ կրթել, այլ և ամենաչնչին իր եա չեն հաւատալ։ Այս տեղ յիշել հարկաւոր է, թէ անունը գործին կ՚բարձրացնէ, նորա համար՝ որ ուսման սրբազան գործը, ընդհակառակը, կ՚կորցնէ իւր արժանաւորութիւնը, եթէ նորա մասին քարոզող դառնան Հայկազեանի նմանները, դորանով բոլորը պիտոյ է զզուին ո՛չ միայն իւրեանց գործից, այլ և անգամ լրագիր կարդալուց։ Ես ասումեմ այն՝ ինչ որ ընդհանուրը արձագանք կ՚տայ. ուրեմն թողնելով մի կողմ Պ. Հայկազեանի միտքը, եթէ մենք կամինք ունեցած վնասներից հեռանալ, պէտք է յառաջադիմութեան նպատակին նայինք և ո՛չ թէ յետ դառնանք և իրր վրէժխնդրութիւն անցեալի հետ կռուինք։ Այնքան նորամոլ էլ չէ պիտոյ լինինք, որ ինչպէս ասումեն, նոր հագուստ սիրելով և դեռ նորը չ՚ճարած՝ շուտով հին շորերս հանենք և մերկ մնանք։ Եթէ արժանաւորը յառաջ գայ, անարժանը իւր տեղը կը ճանչնայ։ Պ. Հայկազեանը պարտաւոր է յառաջ արժանաւորի տեղը ցոյց տալ, յետոյ անարժանին ճանապարհ։ Ես կարծում եմ որ լաւ կ՚լինէր, եթէ Աղէքսանդրապօլու հասարակութիւնը համաձայնէր պ. Հայկազեանին վերատեսուչ կարգել։ Երանի՜՝ եթէ այս իմ խորհրդիս արժանաւորութիւն տրուէր. այն ժամանակ բացի այն՝ որ ուսումնարանի առաջադիմութիւնը պէտք է լուսափայլէր, կըլցուէր նաև Պ. Պետրոսի բազմաժամանակեայ վրէժխնդրութիւնը. բայց ափսոս չէ՞ պատանեկին և ընդհանուրի օգուտը քարոզող խեղճի մարդուն այդքան խոր պահել քէն և ատելութիւնը։ Չեմ խօսում այն իրաւունքը որ տրուած է պարոնին—նա կարող է վերատեսուչ էլ լինել. բայց չէ՞ որ բարեխոհութիւնը կ՚պահանջէ ո՛չ թէ օգնելէն ամբոխների համար, այլ մեզ վերայ իշխող հանգամանքների վերայ մտածել։ Հրաւիրում եմ Պ. Հայկազեանին նիւթապէս ճանաչել այն առարկայն, որոյ համար խօսում է, եթէ ոչ . . .

"Ողբամ զքեզ Հայոց Աշխարհ"ի հետ արդարև կ՚ողբամ, որ հին կրթութիւնը իւր սաստկութեամբը քէն է սերմանել աշակերտների մէջ. բայց չեմ ասել թէ խոհական աշակերտները միևնոյն են մտածում, ինչպէս Հայկազեանը. ո՛չ, նոքա միայն իւրեանց հարկաւոր երախտագիտութիւնները մտքերումն են պահել։ Թէ հին կրթութեան սաստկութիւնը ատելութիւն է ծնել աշակերտների մէջ դէպի իւրեանց ուսուցիչը, դորան յայտնի վկայ է պ. Նամակագիր Պետրոս Դ.ոնդաղչի Դաւթեանը, որը ազգասիրութիւնից ստիպուած, կամ ո՞վ գիտէ ինչո՞ւց, տիտղոս է պարգևել իրեն "Հայկազեան" վերնագրով. ուրեմն թո՛ղ մխիթարուի իւր երևակայութեամբը և աւելորդ է նորա ճաշակին դիպչել։ Ես կըցանկամ որ նա իւր խելքը, գոնէ այն խելքը՝ որը կամենում է ուրիշին յայտնել, չափէ և իւր հասկացողութեանը ենթադրէ. և չ՚կարծէ՝ թէ ամեն ժամանակ իւր աննիւթ խօսքերը տպագրութեան թերթեր պէտք է լցնեն, նորանից՝ ինչպէս թերակիրթ անձից կամ ինչպէս ինքը աւելի լաւ վկայում է, անձնագիտակ մարդուց (ըստ որում դպրոցում այս է սովորել), թէպէտ օգտաւոր գործ կամ խօսք սպասելը աւելորդ է, բայց յուսալով՝ որ նա երկար միջոց դպրոցի վնասակար ներգործութիւնից հեռի է և պատուական լրագրների մաքուր բարոյականութեան օդը կըծծէ, ես դարձեալ կ՚մխիթարեմ զիս այն յուսով՝ թէ իմ Պետրոս իւր սրտից պիտոյ է այսուհետև հանէ սուրբ ցանկութիւններ, անյիշաչար անցքեր և օգտաւէտ նպատակ ունեցող մտածութիւններ։

Դ---ին Ա---եան։

1870 —ի 31 Մ—յ—

Աղեքսանդրապօլ